

Այցելեցին Ծիծեռնակաբերդ

24.04.2012



Ապրիլի 24-ին, վաղ առավոտյան Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի գլխավորությամբ մարզպետարանի աշխատակազմը՝ փոխմարզպետը, աշխատակազմի ղեկավարը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներն ու աշխատակիցները, այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանությանը զոհ դարձած մեր հայրենակիցների հիշատակին:

Իր ձայնը միացնելով ավելի քան մեկուկես միլիոն անմեղ զոհերի ոգեկոչմանը միտված երթի բազմահազար մասնակիցներին, մարզի պատվիրակությունը ծաղկեպսակ եւ ծաղիկներ դրեց անմար կրակին՝ վերստին հաստատելով այն միտումը, որ հայ ժողովրդի պահանջատիրական նկրտումները անշրջելի ու անբեկանելի են, եւ այդ գաղափարի շուրջ ողջ հայությունը միասնական է ու անկոտրում:

Ապրիլի 24-ին հիշատակի արարողություններ տեղի ունեցան նաեւ մարզի քաղաքային եւ գյուղական մի շարք համայնքներում: